ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԵՎ
ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ՄԻՋԵՎ

01 Հունիսի, 2023թ. Ծրագրի հայտ WAFT-AR-03

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը (այսուհետ՝ ՀՏԶՀ) ի դեմս գործադիր տնօրեն **Սարգիս Բաղինյանի**, որը գործում է ՀՏԶՀ-ի Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

ՀՀ **Արմավիրի** մարզի **Վաղարշապատ** համայնքի **Կոմունալ ծառայությունների բարելավում ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) **Նախաձեռնող Խումբը** (այսուհետ՝ ՆԽ) ի դեմս նախագահ **Դիանա Գասպարյանի**, որը գործում է ՄՆՏԶ ծրագրին մասնակցելու մասին **Արմավիրի** մարզի **Վաղարշապատ** համայնքի ավագանու **13 ապրիլի, 2022թ.** թիվ **67** որոշման **(Հավելված 1)**, **Արմավիրի** մարզի **Վաղարշապատ** համայնքի ավագանու **13 ապրիլի, 2022թ.** թիվ **68** որոշման **(Հավելված 2)** և ՄՆՏԶ ծրագրի շահառուների հետ **24 մայիսի, 2023թ.** ժողովի արձանագրությոան հիման վրա **(Հավելված 3)**, մյուս կողմից, այսուհետ միասին՝ "Կողմեր", պայմանավորվում են հետևյալի մասին.

I. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Իրականացնել **Արմավիրի** մարզի **Վաղարշապատ** խոշորացված համայնքի **Կոմունալ ծառայությունների բարելավում** Ծրագիրը համայնքի մասնակցությամբ և նրանց ներդրման օգտագործմամբ համաձայն կից ներկայացված փաստաթղթերի:

II. ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ և ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2.1. Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է **176,000,000 դրամ**, ըստ Ծրագրի բաղադրիչների, տեսակի և աղբյուրի սահմանվում է սույն Համաձայնագրին կից ներկայացված ***Ենթածրագրի վերջնական փորձաքննության եզրակացությամբ (Հավելվածներ 5, 6, 7, 9 և 10)***:

2.2. ՆԽ-ը պարտավորվում է մասնակից համայնքների կամ այլ ներդրումների հաշվին ապահովել Ծրագրի համայնքային ներդրման վճարումը: **Համայնքի դրամական ներդրումը կազմում է 8,800,000** դրամ:

Այս գումարը ներառում է.

ՀՏԶՀ-ի համաձայնությամբ ՆԽ-ի կողմից պատվիրված մասնագիտացված նախագծա-նախահաշվային աշխատանքների, խորհրդատվական և այլ ծառայությունների և շինարարական աշխատանքների արժեքը, որը կազմել է **0 դրամ**:

Հաշվի առնելով այս վճարումները, ՆԽ-ի/մասնակից հանայնք(ներ)ի ներդրման չափը կազմում է **8,800,000** դրամ: ՆԽ-ը պարտավորվում է ապահովել այս գումարի վճարումը ՀՏԶՀ-ի բանկային հաշվին սույն Համաձայնագիրը ստորագրելուց հետո 30 օրացույցային օրվա ընթացքում:

Այս գումարը կարող է փոփոխվել միմիայն մեկ դեպքում՝ եթե Ծրագրի իրականացման ընթացքում ՆԽ-ի առաջարկով և ՀՏԶՀ-ի համաձայնությամբ կատարվի գնվող ապրանքների կամ աշխատանքների ծավալների ավելացում, ՆԽ-ի ներդրումը համապատասխանաբար պետք է վերանայվի և ավելացվի լրացուցիչ ծախսերի **5%-ի** չափով:

2.3. Նախորդ կետով սահմանված Ծրագրի համաֆինանսավորման համայնքի բաժնեմասը 30 օրացույցային օրվա ընթացքում չվճարելու դեպքում ծրագիրը կարող է մերժվել:

2.4. ՆԽ-ն ապահովում է նաև այն բաղադրիչների/գործողությունների ֆինանսավորումը, որոնց համար համաձայն ***Ենթածրագրի վերջնական փորձաքննության եզրակացության*** ֆինանսական միջոցներ պետք է տրամադրվեն այլ աղբյուրներից: Ծրագրի այս մասի համաֆինանսավորումն ըստ Ծրագրի և դրա բաղադրիչների իրականացման և ֆինանսավորման ժամանակացույցի չկատարելու կամ ոչ լրիվ կատարելու դեպքում Ծրագրի ֆինանսավորումը ՀՏՋՀ-ի կողմից կարող է դադարեցվել:

2.5. ՆԽ-ն ապահովում է ոչ դրամային ներդրումը համաձայն ***Հավելված 18-ի***: Այդ ներդրումը համաձայնեցված ժամանակին, ծավալներով և որակով չկատարելու դեպքում Ծրագիրը կարող է ՀՏՋՀ-ի կողմից դադարեցվել:

2.6. ՀՏՋՀ-ն համաձայնվում է վճարել Ծրագրի ՀՏՋՀ-ի կողմից ֆինանսավորվող բաղադրիչների ընդհանուր արժեքի մնացած մասը, որն ըստ Ծրագրի ընդհանուր նախահաշվի կազմում է **167,200,000** դրամ:

Այս գումարը նախնական է և ենթակա է վերանայման մրցույթում հաղթած կապալառուի առաջարկած գնի և ծրագրի իրականացման ընթացքում աշխատանքների ճշտված ծավալների հիման վրա:

2.7. Համաձայնագրի ընդհանուր արժեքը և ՀՏՋՀ-ի բաժնեմասի գումարները կրում են կողմնորոշիչ բնույթ: Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համար բոլոր վճարումները, որոնք ներառում են ՀՏՋՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների բաժնեմաս, կատարվում են ՆԽ-ի կողմից կնքված և ՀՏՋՀ-ի կողմից հաստատված պայմանագրերի և վճարման փաստաթղթերի (կատարողական ակտեր և այլն) համաձայն:

III. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

3.1. ՆԽ-ի կողմից իր վրա վերցրած որևէ պայմանագրային պարտավորություն, որը առնչվում է Ծրագրի՝ ՀՏՋՀ-ի կողմից համաֆինանսավորվող բաղադրիչի, չունի իրավական ուժ, եթե դրա համար ՆԽ-ը չի ստացել ՀՏՋՀ-ի գրավոր համաձայնությունը:

3.2. Ծրագրի շրջանակներում բոլոր ապրանքների, խորհրդատվական ծառայությունների և աշխատանքների գնումները իրականացվում են ըստ Գնումների պլանի ***(Հավելված 11):*** Ի թիվս այլոց, Գնումների պլանում նշված է գնումը իրականացնող կողմը և գնման գործընթացը, ինչպես նաև անհրաժեշտ պայմանները, որոնց կատարելուց հետո կարող է սկսվել ամեն մի գնման գործընթացը:

3.3 Գնումները, որոնք համաֆինանսավորվում են ՀՏՋՀ-ի միջոցներով, գնվում են ըստ Համաշխարհային Բանկի սահմանված գնման ընթացակարգերի: Գնումները, որոնք իրականացվում են առանց ՀՏՋՀ-ի միջոցների, իրականացվում են ըստ ֆինանսավորող կողմերի առաջարկված ընթացակարգերի:

3.4. ՆԽ-ն իրավունք ունի սկսել գնման գործընթացը միայն համանքի ներդրումն՝ ըստ 2.2 կետի ապահովելուց հետո:

IV. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

4.2. Բոլոր վճարումները կապալառուներին, մատակարարներին, տեխնիկական հսկիչներին և այլն կատարվում են համաձայն նրանց հետ կնքված պայմանագրերի:

4.3. Բոլոր վճարումները, որոնք պետք է կատարվեն ՀՏՋՀ-ի միջոցների հաշվին, կատարվում են ՀՏՋՀ-ի բանկային հաշիվներից անմիջականորեն Կապալառուին, մատակարարին կամ ծառայություն մատուցողին:

4.4. ՀՏՋՀ-ի կողմից Կապալառուին յուրաքանչյուր վճարում կատարվում է ըստ նրա կողմից կատարված աշխատանքի: Կապալառուն պատրաստում և ՀՏՋՀ-ին է ներկայացնում այդ աշխատանքներին համապատասխան կատարողական ակտ: ՀՏՋՀ-ի վերահսկող ինժեները այն ստուգում է և որոշում կատարված աշխատանքի արժեքը՝ ըստ Կապալառուի նախահաշվի համապատասխան տողերի ծավալների և միավոր գների, և հաստատում Կապալառուին վճարվելիք գումարի չափը: Ամեն մի վճարում կատարվում է ըստ պատշաճ կերպով պատրաստված վճարման հայտի, որը պատրաստվում է ՀՏՋՀ-ի կողմից և ստորագրվում տեխնիկական վերահսկիչի, ՀՏՋՀ-ի վերահսկող ինժեների, Վերահսկման բաժնի վարիչի և Ծրագրերի փորձաքննության և իրականացման վարչության պետի կողմից:

4.5. Մատակարարված գույքի/սարքավորումների կամ տրամադրված ծառայությունների համար վճարման կարգը սահմանվում է ՆԽ-ի և գույքիշծառայությունների մատակարարների միջև կնքվող և ԿՏՋՀ-ի կողմից հաստատվող պայմանագրերով:

V. ՆԽ-Ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. ՆԽ-ը բոլոր աշխատանքները և ծառայությունները գնում են ***Հավելված 12***-ում նախատեսված կարգով և օգտագործելով սույն Համաձայնագրում նշված ստանդարտ փաստաթղթերը:

5.2. ՆԽ-ը պարտավոր է ապահովել Ծրագրի բոլոր բաղադրիչների իրականացումը՝ անկախ դրանց բնույթից և ֆինանսավորման աղբյուրներից: Որևէ բաղադրիչ չիրականացնելու, կամ ոչ պատշաճ ձևով իրականացնելու դեպքում

ՏՋՀ-ն կարող է դադարեցնել ամբողջ Ծրագրի իրականացումը:

5.3. Շինարարական աշխատանքների դեպքում ՆԽ-ը՝ որպես ծրագրի Շահառու, պարտավորվում է կապալառուի ընտրության գործընթացն ավարտելու և պայմանագիր կնքելու օրվանից 14 (տասնչորս) օրացուցային օրվա ընթացքում մրցույթում հաղթող ճանաչված Կապալառուին տրամադրել Շինարարության թույլտվություն: Նշված պարտավորությունը խախտելու դեպքում ՀՏՋՀ-ն իրավունք ունի դադարեցնել և մերժել ծրագիրը, իսկ ՆԽ-ը պարտավոր է ամբողջությամբ հատուցել ՀՏՋՀ-ին նրա կողմից կատարված ծախսերը, ներառյալ նախագծման ծախսը, մամուլում մրցույթի հայտարարության տպագրման , և այլ ծախսերը:

5.4. ՆԽ-ը՝ որպես ծրագրի Շահառու, պարտավորվում է ապահովել շինարարական հրապարակը, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ Կապալառուի կողմից համապատասխան աշխատանքներն իրականացնելու համար:

5.5. ՆԽ-ը կապալառուին չի թույլատրում կատարել Ծրագրի իրականացման ժամանակացույցի, արժեքի, ինչպես նաև նախագծի, տեխնիկական պայմանների և օգտագործվող նյութերի որևէ փոփոխություն կամ ձևափոխում առանց ՀՏՋՀ-ի գրավոր համաձայնության: 5.8. ՆԽ-ը պարտավոր է տեղեկացնել ՀՏՋՀ-ին ծրագրի մյուս բաղադրիչների շինարարական աշխատանքների մեկնարկի մասին:

5.6. ՆԽ-ը պարտավոր է ապահովել, որ աշխատանքների կատարման ընթացքում և հետագայում՝ ենթակառուցվածք(ներ)ի շահագործման և պահպանման ընթացքում, Կապալառու(ներ)ի և ենթակառույց(ներ)ի շահագործման համար պատասխանատու կազմակերպության կողմից կկատարվի Բնապահպանական կառավարման պլանը, որը

նախապատրաստվել և համաձայնեցվել է ծրագրի նախապատրաստման և փորձաքննության ընթացքում *(Հավելված 13)*[1]:

5.7. ՆԽ-ը կպահպանի հետադարձ կապի և բողոքարկման մեխանիզմները, որոնք ստեղծվել են ծրագրի նախապատրաստման և փորձաքննության ընթացքում:

5.8. ՆԽ-ը պարտավոր է ապահովել վերականգնված/կառուցված ենթակառուցվածք(ներ)ի շահագործման և պահպանման վերաբերյալ պարբերական (տարեկան և ՀՏՋՀ-ի պահանջով) հաշվետվությունների տրամադրումը ՀՏՋՀ-ին:

5.9. ՆԽ-ը ներկայացնում է ՀՏՋՀ-ին Ծրագրին վերաբերվող փաստաթղթերի բնօրինակների կնքված փաթեթը, իր մոտ 5 (հինգ) ընթացքում պահում է դրանց պատճենները և թույլատրում է ՀՏՋՀ-ի աշխատակիցներին և վերստուգողներին կամ որևէ լիազորված անձի տեղում վերստուգում կատարել: ՆԽ-ի մոտ պահվող փաստաթղթերի ցանկը կցվում է *(Հավելված 15)*:

5.10. ՆԽ-ը պարտավոր է ծրագրի առաջընթացի վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ տրամադրել մասնակից համայնք(ներ)ին, այդ նպատակով հրավիրելով՝ ըստ անհրաժեշտության, համայնքի ժողովներ կամ հատուկ տեղեկատվական վահանակներ պահելով: Վահանակի վրա պետք է փակցվեն ծրագրի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ պարունակող նյութեր: ՆԽ-ի մոտ պահվող բոլոր փաստաթղթերը պետք է մատչելի լինեն և ներկայացվեն մասնակից համայնքի յուրաքանչյուր անդամի պահանջով:

5.11. ՆԽ-ը պարտավորվում է կապալառուների կամ մատակարարների կողմից պայմանագրային պայմանների խախտման դեպքում տրամադրել ՀՏՋՀ-ին տեղեկություն կապալառուին կամ մատակարարների տույժերի ենթարկելու նպատակով:

VI. ՀՏՋՀ-Ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. ՀՏՋՀ-ն պարտավորվում է ֆինանսավորել ծրագիրը համապատասխան բաղադրիչները սույն Համաձայնագրի Հավելվածների համաձայն:

6.2. ՀՏՋՀ-ն իրավունք ունի ցանկացած ժամանակ, առանց նախազգուշացման, ստուգել ծրագրի համապատասխան բաղադրիչների շինարարական աշխատանքների որակն ու ծավալը, ինչպես նաև օգտագործվող նյութերի որակը:

6.3. ՀՏՋՀ-ն կիրականացնի նաև ամենամսյա վերահսկողական այցեր շինհրապարակ(ներ)՝ ստուգելու աշխատանքների կատարման համապատասխանությունը Բնապահպանական և սոցիալական կառավարման և Վերաբնակեցման քաղաքականության շրջանակներին, ինչպես նաև ՀՀ բնապահպանական և սոցիալական օրենսդրությանը:

6.4. ՀՏՋՀ-ն պարտավոր է իրականացնել Ծրագրի իր կողմից համաֆինանսավորվող բոլոր բաղադրիչների ընդհանուր և տեխնիկական վերահսկումը՝ ապահովելու համար կատարած աշխատանքների ծավալի, որակի և արժեքի համապատասխանությունը երկու կողմերի միջև համաձայնեցված նախագծա-նախահաշվային փաստաթղթերին:

6.5. ՀՏՋՀ-ն կարող է իր նախաձեռնությամբ, տեխնիկական կամ ֆինանսական պայմաններից և պահանջներից ելնելով, կատարել փոփոխություններ սույն Համաձայնագրում և եթե ՆԽ-ի նախագահի կողմից փոփոխությունն առանց հիմնավոր պատճառաբանության չի ընդունվում, ապա ՀՏՋՀ-ն իրավունք ունի դադարեցնել սույն Համաձայնագիրը ու Ծրագրի ֆինանսավորումը:

---

[1] Միայն Բնապահպանական B կատեգորիայի ծրագրերի համար

6.6. ՀՏՁՀ-ն պարտավոր է անմիջապես ուսումնասիրել ՆԽ-ի կողմից ներկայացրած յուրաքանչյուր զեկուցագիր, որը կվերաբերվի ընդունված նախահաշիվներից կամ տեխնիկական պահանջներից որևէ շեղման:

6.7. ՆԽ-ի նախագահի կամ որևէ անդամի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորություններն անհիմն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, ՀՏՁՀ-ն իրավունք ունի մասնակից համայնքների առջև դնել ՆԽ-ի նախագահի կամ անդամների վերընտրության հարցը:

VII. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ և ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

7.1. Համաձայն Ծրագրի իրականացման ժամանակացույցի և Գնումների Պլանի ՀՏՁՀ-ն պայմանագիր է կնքում տեխնիկական վերահսկչի հետ՝ իր կողմից համաֆինանսավորված շինարարական աշխատանքները վերահսկելու համար սույն Համաձայնագրի 7.2 կետում սահմանված կարգի համաձայն:

7.2. ՀՏՁՀ-ն ընտրում է տեխնիկական վերահսկիչ մրցութային կարգով՝ հրապարակելով հետաքրքրվածության ներկայացման հրավեր և ստացված առաջարկների հիման վրա կազմելով որակյալ հավակնորդների ցուցակ:

7.3. Իր հերթին, ՆԽ-ը նույնպես կարող է պայմանագիր կնքել տեխնիկական վերահսկչի հետ վերահսկելու համար այն աշխատանքները, որոնք չեն համաֆինանսավորվում ՀՏՁՀ-ի կողմից:

7.4. Ծրագրի իրականացման ընթացքում հեղինակային հսկողությունն իրականացվում է նախագծի հեղինակ(ներ)ի կողմից: Վերջիններիս կողմից հեղինակային հսկողությունն իրականացնելուց հրաժարվելու դեպքում՝ մրցութային կարգով ընտրված համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից:

VIII. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԸ և ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ծրագրով նախատեսված ՀՏՁՀ-ի կոզմից համաֆինանսավորվող աշխատանքների ավարտից հետո դրանց ընդունումը կատարվում է ՀՏՁՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, կատարողական ակտերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի ու տեխնիկական պահանջների հիման վրա: Կատարումը բավարար համարվելու դեպքում կազմվում է Շինարարության ավարտական ակտ, որը ներկայացվում է ՆԽ-ին:

8.2. ՆԽ-ը 7 (յոթ) օրվա ընթացքում պետք է ստուգի ներկայացված կատարողականը և Աշխատանքների հանձնման-ընդունման ակտը, ընդունի այն՝ ստորագրելով, կամ մերժի՝ ՀՏՁՀ-ին համապատասխան գրավոր հիմնավորում ներկայացնելով:

8.3. Եթե կատարված աշխատանքների հետ չառնչվող պատճառով ՆԽ-ի նախագահը չի ստորագրում Շինարարության ավարտման ակտը, իսկ ընդունող հանձնաժողովի մնացած անդամները համարում են, որ կատարված աշխատանքները համապատասխանում են գործող նորմերին և պայմանագրի պահանջներին, ապա հանձնաժողովը ստորագրվող ակտում արձանագրում է այդ փաստը, և ակտը հիմք է ծառայում կապալառուին անհրաժեշտ վճարումները կատարելու համար:

IX. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Սույն Համաձայնագրի պայմանների յուրաքանչյուր փոփոխություն պետք է կատարվի հետևյալ կարգով՝

9.1.1. Յուրաքանչյուր առաջարկություն մյուս կողմին ներկայացվում է գրավոր:

9.1.2. Առաջարկության հաստատման դեպքում կազմվում է համապատասխան միացյալ փաստաթուղթ, որը պարունակում է այդ փոփոխությունների հետևանքով առաջացող հնարավոր ֆինանսական, տեխնիկական և ժամկետային փոփոխությունները:

9.1.3. Նման փոփոխությունները դառնում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

9.1.4. Վերոհիշյալ կարգը խախտելու դեպքում ցանկացած փոփոխություն համարվում է անօրինական:

9.2. Եթե աշխատանքը չի ավարտվել կապալառուի հետ կնքված պայմանագրում սահմանված ժամկետում, և պատճառները պայմանավորված են՝

ա. երկու կողմերի համաձայնեցված լրացուցիչ աշխատանքներով,

բ. ՆԽ-ի կամ կապալառուի ազդեցության ոլորտից դուրս գտնվող պայմաններով, ինչն ընդունվում է ՀՏԶՀ-ի կողմից,

ապա կապալի պայմանագրում սահմանված ավարտման ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ:

9.3. ՀՏԶՀ-ն իրեն իրավունք է վերապահում մասամբ կրճատել կամ մեծացնել սույն Համաձայնագրով նախատեսված և ՀՏԶՀ-ի կողմից համաֆինանսավորվող աշխատանքների ծավալը: Նման դեպքում սույն Համաձայնագրով նախատեսված ծավալներն ու արժեքները համապատասխանաբար փոփոխվում են:

X. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԿԱՄ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ

10.1. ՀՏԶՀ-ն ցանկացած ժամանակ իրավունք ունի հիմնավորված պատճառաբանությամբ լուծել սույն Համաձայնագիրը:

10.2. Եթե Համաձայնագիրը լուծվում է ՆԽ-ի կողմից այն խախտելու պատճառով, ապա ՀՏԶՀ-ն կարող է պահանջել ՆԽ-ից վերադարձնել իր կողմից կապալառուին, մատակարարին կամ ծառայություն մատուցողին վճարված ամբողջ գումարը կամ դրա որևէ մասը:

10.3. Եթե ՀՏԶՀ-ն լուծում է Համաձայնագիրը ոչ վերը նշված պատճառով, ապա նա գրավոր տեղեկացնում է ՆԽ-ին աշխատանքների դադարեցման պատճառի մասին և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատրաստում է աշխատանքներն ամփոփող կատարողական և կապալի կամ մատակարարման պայմանագրի լուծման ակտերը: Դրանից հետո Համաձայնագրի գործողությունը համարվում է դադարեցված, և Կապալառուն և/կամ Մատակարարը պետք է ստանան վարձատրություն կատարված աշխատանքների կամ մատակարարված ապրանքի արժեքի չափով և փոխհատուցում՝ պայմանագրի լուծման պատճառով իրեն պատճառված վնասների համար՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Հնգօրյա ժամկետից հետո ՆԽ-ի, մատակարարի կամ կապալառուի կողմից ՀՏԶՀ-ն որևէ նոր պահանջ չի ընդունում և լրացուցիչ փոխհատուցում չի կատարում:

10.4. Կատարված աշխատանքների կամ մատակարարված ապրանք(ներ)ի և/կամ ծառայությունների արժեքի վճարումն իրականացնելուց հետո մնացած գումարը ՀՏԶՀ-ի կողմից վերադարձվում է ՆԽ-ին:

XI. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Տարաձայնություն կամ վեճ ծագելու դեպքում կողմերը ջանում են դրանք լուծել բանակցությունների միջոցով:

11.2. Այն դեպքում, երբ վեճը հնարավոր չէ կարգավորել 11.1 կետում նախատեսված ձևով, ապա կողմերը դիմում են դատարան:

XII. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1. Ֆորս-մաժորի դեպքում գործում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգը:

12.2. ՆԽ-ը, Ծրագրով նախատեսված աշխատանքներն սկսելուց հետո, մեկ շաբաթվա ընթացքում շինհրապարակ(ներ)ի երևացող տեղում պետք է փակցնի և մինչև աշխատանքների ավարտը պահպանի ցուցանակ(ներ), որի մեջ նշվում են ՀՏՋՀ-ի, համաֆինանսավորող կազմակերպության կամ բարերարի (եթե առկա է), համայնքի և կապալառուի անունները:

12.3. ՆԽ-ը՝ համապատասխան պատասխանատու պաշտոնյաների հետ համատեղ պարտավոր են իրականացնել Ծրագրի առարկա հանդիսացող ենթակառույցների պատշաճ պահպանումը և շահագործումը՝ ըստ *Հավելված 17*-ի: ՀՏՋՀ-ի համաֆինանսավորմամբ ստեղծված կամ վերականգնված որևէ ենթակառույց չի կարող օտարվել, սեփականաշնորհվել կամ օգտագործվել այլ նպատակներով Ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում: Այս պայմանի խախտելու դեպքում ՀՏՋՀ-ն իրավունք ունի ենթակառույցի սեփականատիրոջից ետ պահանջել և ստանալ Ծրագրի իրականացման համար իր կողմից ծախսված գումարը:

XIII. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆԺԱՄԿԵՏԸ

13.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է ստորագրման պահից և գործում է մինչև ավարտման ակտի ստորագրման օրը:

XIV. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

14.1. Բոլոր այն հարցերը, որոնք չեն նախատեսված սույն համաձայնագրով, կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

14.2. Համաձայնագրին որպես հավելվածներ կցվող փաստաթղթերի սպառիչ ցանկը սահմանվում է ստորև՝ **14.3** կետում: **Հավելվածներ 5-ը, 6-ը, 7-ը, 9-ը և 10-ը** ամփոփ ներկայացված են կից՝ ***Ենթածրագրի վերջնական փորձաքննության հաշվետվությունում:*** Բացի **Հավելված 4-ի**, սույն Համաձայնագրի շրջանակներում կիրառելի չեն նաև **Հավելվածներ 14-ը, 16-ը և 18-ը**:

14.3 Համաձայնագրին որպես հավելված կցվում են հետևյալ փաստաթղթերը՝

Հավելված 1	ՆԽ-ի ստեղծման մասին որոշում(ներ)
Հավելված 2	ՆԽ-ի լիազորագրեր/Համայնքի ղեկավար ընտրելու մասին լիազորված մարմնի որոշումներ
Հավելված 3	Մասնակից համայնք(ներ)ի ընդհանուր ժողովների որոշումների արձանագրություն(ներ)
Հավելված 4	ՆԽ-ի միասնական հուշագիր
Հավելված 5	Ծրագրի ընդհանուր նախահաշիվը
Հավելված 6	Շինարարական աշխատանքների մանրամասն նախահաշիվները
Հավելված 7	Ձեռք բերվող սարքավորման մասնագրերը
Հավելված 8	Նախնական Համաձայնագիրը
Հավելված 9	ՆԽ-ի կողմից պատվիրված Ծրագրի նախապատրաստման աշխատանքների պայմանագրեր և վճարման փաստաթղթեր
Հավելված 10	Ծրագրի և դրա բաղադրիչների իրականացման և ֆինանսավորման ժամանակացույցը
Հավելված 11	Գնումների պլան

Հավելված 12 Մրցույթի անցկացման կամ “Գնանշում” ընթացակարգով գնման կարգ
Հավելված 13 Բնապահպանական կառավարման պլանը
Հավելված 14 Ենթակառուցվածք(ներ)ի շահագործման և պահպանման վերաբերյալ պարբերական հաշվետվությունների ձև
Հավելված 15 ՆԽ-ում պահվող փաստաթղթերի ցանկը
Հավելված 16 Շինարարության ավարտական ակտի ձևը
Հավելված 17 Ենթակառույց(ներ)ի պահպանման և շահագործման պլանը
Հավելված 18 ՆԽ-ի ոչ դրամային ներդրումը

XV. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու փ. 31
ՀՎՎՀ **00846441**
Գանձապետարան ԿԲ
Հ/հ **900018006198**

Նախաձեռնող խումբ
Հասցե՝ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին
Մաշտոցի փող., 0 շենք
Հեռախոս՝ 041 26 05 55

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՏԶՀ-ի կողմից	ՆԽ-ի կողմից
Գործադիր տնօրեն՝ Ս.Բաղինյան	ՆԽ-ի ղեկավար՝ Դ.Գասպարյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

ԿՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ԼՏ Ծրագրին մասնակցության վերաբերող համայնքի ընդհանուր ժողովի

հաղվածք

"24" մայիսի 2023թ

Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք

Ժողովի մասնակից համայնքները/բնակավայրերը և դրանց ներկայացուցիչների թիվը.

Համայնք/բնակավայր **Վաղարշապատ, Էջմիածին** _23_ հոգի,

Համայնք/բնակավայր ***Վաղարշապատ, Ոսկեհատ*** ___1__ հոգի,

Ընդհամենը՝ 24 հոգի, այդ թվում կին՝ _8_ հոգի

(Լրացնել խոշորացված համայնքի կամ համայնքների միության ամեն համայնքի/ բնակավայրի անվանումը և մասնակիցների թիվը, այդ թվում կանանց)

Ժողովի մասնակից շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ՝ «Դիասպորարմ» ՀԿ

Լսեցին.

1. ՀՏՋՀ ներկայացուցիչ Արամ Գրիգորյանին, ով մանրամասն ներկայացրեց ՍՆՏՋ ԼՏ Ծրագիրը:

2. Նախաձեռնող խմբի ներկայացուցիչ Արսեն Պետրոսյանին, ով մանրամասն ներկայացրեց «Վաղարշապատ համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում» ենթածրագրի առաջարկը՝ ՍՆՏՋ ԼՏ Ծրագրին մասնակցելու համար, և դրա նախապատրաստմանն ուղղված Նախաձեռնող խմբի կողմից կատարված աշխատանքը: Մասնավորապես, ներկայացվեց մասնակից բնակավայրերում անցկացված քննարկումները՝ ուղղված ծրագրի ընտրությանը և ծրագրով նախատեսված համայնքային ներդրմանը: Համայնքի կողմից 20/10/2022թ-ն ներկայացվել է N5622 գրությունը, ըստ որի ծրագրով նախատեսված 2 հատ մարդու և փոշեհավաք մեքենաները առաջարկվում է փոխարինել 2 հատ 10տ բեռնատարողունակությամբ ինքնաթափ մեքենաներով: Համայնքի կողմից 21/10/2022թ ներակայցվել է նաև հիմնավորում տեղեկանք, այն մասին որ ինքնաթափ մեքենաների առկայության պարագայում համայնքը կունենա բյուջետային միջոցների խնայողություն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տրամադրել 2 հատ ինքնաթափ մեքենա, 2 հատ ուղևորաբեռնատար մեքենա, 1 հատ մինիամբարձիչ ճանապարհային փոռեզով, 1 հատ բազմաֆունկցիոնալ կոմունալ ճանապարհային մեքենա, ինչի շնորհիվ համայնքը կնոտեսի բյուջետային միջոցները: Տրամադրվելիք տեխնիկան կաշխատի և՛ համայնքային կարիքները բավարարելու նպատակով, և՛ դրա միջոցով վճարովի ծառայություններ կմատուցվեն մասնավոր սեկտորի համար, ինչի շնորհիվ համայնքային բյուջեն կհամալրվի մոտ 6,300,000 ՀՀ դրամ եկամտով: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն 6 նոր աշխատատեղեր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 176,000,000 ՀՀ դրամ, որից համայնքային ներդրումը կազմում է 5%՝ 8,800,000 ՀՀ դրամ:

Որոշեցին.

1. ՀՏՋՀ-ի կողմից իրականացվող ՍՆՏՋ ԼՏ Ծրագրին մասնակցելու համար <u>հաստատել</u> մասնակից բնակավայրերի որոշմամբ ձևավորած նախաձեռնող խմբի կողմից նախապատրաստված ծրագրի առաջարկը.

«կողմ»՝ 24 ; «դեմ»՝ 0 ; «ձեռնպահ»՝ 0 :

Ծրագրի մերժման պատճառը (մերժման դեպքում)՝ _____

_____

2. Պարտավորվել ներդրում կատարել ՀՏՋՀ-ի հաշվարկած ծրագրի ընդհանուր արժեքի *5 %* չափով՝ 8,800,000 *ՀՀ դրամ*, որը համայնքը պարտավորվում է վճարել սահմանված ժամկետում:

«կողմ»՝ 24 ; «դեմ»՝ 0 ; «ձեռնպահ»՝ 0:

3.Այլ տեղեկություններ ծրագրի մասին_____

(նշել եթե այդպիսիք կան)